# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ՀՈՒՆԻՍԻ 2021թվականի N 234

## ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈԲԱՐՁԻ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Գագիկ Մեսրոպյան Վլադիմիրի» Ա/Ձ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը, Գյուլագարակ համայնքի կողմից տրված տեղեկանքը, հաշվի առնելով որ, հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, հողամասի սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և /կամ/ չի առաջացնում սերվիտուտ, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 14 մարտի 1997 թ.-ի թիվ 51 որոշմամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 29 դեկտեմբերի 2005 թ. թիվ 2387 որոշմամբ՝ որոշում եմ

1.06-062-0016-0001 ծածկագրի տակ գտնվող 0.15725 հա փաստացի օգտագործման հողամասի նկատմամբ վերականգնել և ճանաչել Գյուլագարակ համայնքի Հոբարձի գյուղի սեփականության իրավունքը:

2.Վերականգնել և ճանաչել 0,15725 հա բնակավայրի նպատակային նշանակության, հասարակական գործառնական նշանակության հողամասում գտնվող այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացրած և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող 1991թ. կառուցված 923,99 քմ վարչական շենքի և 1991 թ.-ին կառուցված 2,89 քմ աստիճանավանդակի նկատմամբ Գյուլագարակ համայնքի Հոբարձի գյուղի սեփականության իրավունքը:

3.Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

4.Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ Գյուլագարակ համայնք գյուղ Հոբարձի 1-ին փողոց, թիվ 10:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՌԱՖԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2021թ. 06 18
գ.Գյուլագարակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՀՈՒՆԻՍԻ 2021թվականի N 235

## ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ՎԱՀԱՆԱԿՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 42-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով և «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ, հիմք ընդունելով «ՎՎՇԻՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Արմեն Քեշիշյանի հայտը, որոշում եմ.

1.Բավարարել «ՎՎՇԻՆ» ՍՊԸ-ի հայտը՝ Գյուլագարակ համայնքի Գյուլագարակ բնակավայրում և Ստեփանավան-Վանաձոր մայրուղու 22-րդ կմ-ի վրա արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն տրամադրելու մասին, ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան «ՎՎՇԻՆ» ՍՊԸ-ին տալ համայնքի տարածքում գովազդային վահանակների՝ 1-ական քմ մակերեսով, տեղադրման թույլտվություն 01.07.2021թ.-31.12.2021թ. ժամանակահատվածի համար:
2.Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:
3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ.Պ. ՌԱՖԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2021թ. 06 21
գ.Գյուլագարակ